

ՀԱՏԸ 5 Ս. Գ.



ԵՐԿԾԱՐԱԹԱԹԵՐԹ  
Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Գ. Ր. Ա. Կ. Ա. Ն. Ե. Ի. Գ. Ի. Տ. Ա. Կ. Ա. Ն.

Ա. ՏԱՐԻ      ՊԵՅՐՈՒԹ 1930 Յունվար 25      ԹԻԻ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կա՞յ Լիբանան ահայ գրականութիւն

Փիլիսոփայութիւն (բանաս.) Հրացայտ

Զփոխարինում Սէրը (բարգ.) Շաւրուան

Կամք

Սէր (բարգ.) Բ.

Կիլիկիա (բանաս.) Սիր. Օրջանեան

. . . (Մ. Գ.) X

Զօնում Եղանակը S. Գալայեան

Աչքին Գովրը (Մանկ. գրակ.)

Որու Պարտիս »

K. Bogharian

---

Մ Ա Հ  
Ռ Ռ Ի Բ Է Ն Խ Ա Ն Ա Ջ Ա Տ Ի

Սրտի անհուն վիշտով կ'իմանանք ուսուցիչ պատմաբան, հրապարակագիր, և յեղափոխական Տիար Ռուբէն Խանազատի մահը:

Խմբագրութիւնս իր ցաւակցութիւնները կը յայտնէ սգակիր տիկնոջ ազգականներուն և բարեկամներուն:

---

ԲԱՐԻՔԱԼՈՒՍ

Ուրախութեամբ կ'իմանանք թէ, Տիար Սեդրակ Կեպեկեան քաղաքս ժամանած է «Յփրաս»ի խմբագրութիւնը ստանձնելու համար:

Բարիգալուս եւ յաջողութիւն կը մաղթենք:

# Մ Ի Հ Ո Ի Ն

## Ե Ր Կ Շ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Գ Ր Ա Կ Ա Ն Ե Ի Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Ա. ՏԱՐԻ

ՊԵՅՄԻՒԹ 1930 Յունվար 25

ԹԻԻ 2

### ԿԱՅ

## ԼԻԲԱՆԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ


1373

Գրականութիւնը հայելին է ազգի մը միջավայրին, անկէ կրած տաւորութիւններուն, որոնց աշդեցութեան տակ կը յաւաճացնէ քաղաքակրթական բոլոր ազգի արտադրութիւններ, միւս կողմէն տուեալ պայմաններով ազգին մէջ ստեղծուած ձգտումներուն եւ խտայններուն:

Միջավայրը ցուրտ իրականութիւն մ'է, որ կը պարտադրէ գրողն ու մտածողը ձեւաւորուիլ իր վրայ: Բայց միջավայրը, որքան ալ դրական գործեր արտադրել տայ, այդ գործերը չեն կրնար ձեւ ու գոյն զգենուլ, գրականութիւն կողմել: Հատ ու կոտոր գործեր, որքան ալ պերճաշուք ըլլան չեն կրնար ազգին անհատական դրոշմը կը ող գրականութիւն յուսալացնել:

Որպէս զի ազգ մը կրնայ ունենալ իր առանձինն գրականութիւնը, պէտք է, որ ազգը ամբողջութեամբ, եթէ չափազանցութիւն է, գտնէ մեծամասնութեամբ նոյն ձգտումն ու երազը, նոյն խտայն ու տեսլականը առջևը ունենայ: Գաղափարը գերելու է գրողներու զգացումն ու հոգին: Եւ ան ալ նոյն գաղափարը: Գաղափարը իրեն քաշելու է ամենու երեւակայութիւնը: Զգացումներ անով համակուելու են: Երազներ անով սնանելու են: Գրիչներ անոր ցուի ուսազանին, ուրախութեան բաժակին, ոտեղծագործ աշխատանքին, զոհութեան ողբոյն մէջ թաթխուելու են, որպէսզի կարելի ըլլայ ձեւաւորել, յաւաճացնել գրականութիւն:

Այս չափանիշով եթէ ուշադրութեան առնենք գաղութահայ յետ պատերազմեան գրականութիւնը՝ սրտի անհուն վշտով մը պիտի համակուինք: Ազգային կազմակերպութիւններու անիշխանական դրութեան ճշմարիտ պատկերը ցոլացած պիտի գտնենք գաղութահայ գրականութեան մէջ: Անհայրենիք այս ազգին տարտղնուած վերապրողները հոգեկան ձգտումներու չքաւորութիւնը կ'ապրին: Շէնչող արեւուն տարութեան փոխարէն ձմեռնային սառնամանիքը կը տիրէ գրական Հայ ածուին:



վրայ, որ երբեմն Գուսաներու խումբերը կ'ապրեցնէր:

Այս օր նոյն իսկ նոյն կապոյտ երկնակամարին տակ կեանք առնող գրական կտորներ ոչ մէկ համանմանութիւն ունին իրարու հետ՝ ըլլայ ձեւի, գոյնի, գաղափարի:

Գտնուեցան հոսանքներ, որոնք մասնաւորաբար երիտասարդ գրողներու առջեւ դրին գողափարներ, բայց անոնց յառաջացուցած արդիւնքը ապացուցուց թէ լերիւրածոյ էին անոնք: Պարտադրանք գոյութիւն չունի իտէպլի աշխարհին մէջ, այն ատեն երբ կեանքէն չբղիւր:

Չափահաս գրողներ գուցէ կարենային օճախ մը հիմնել և շուրջերնին հաւա ել երկրպագոյններ, անոնց տալով իրենց գաղափարը, իրենց ձեւը և ստեղծել գրական հոսանք մը: Սակայն ցուրտ իրականութիւնը այնքան զօրաւոր էր, որ շունեցանք գրական տիտան մը զայն արհամարող: Ազգն ամբողջութեամբ վատուժցած էր ու իրական մշակներէն ու մանք ինքզինքնին նուիրեցին աւելի դիւրատար աշխատանքներու, մինչեւ իսկ բաղաբական գործունէութեանց ու անոր ցուրտ շունչին տակ գուացուցին ինքզինքնին կործանելով իրենց երբեմնի հմայքն անգամ:

Ամբողջ գաղութահայ գրականութեան համար ըսուած ճշմարտութիւնը քիչ մաւելի շեշտուած կարելի է ընդունիլ Լիբանանահայութեան համար:

Լիբանանահայութեան մեծամասնութիւնը տնտեսական խիտ աննրպաստ կացութեան մը մատնուած, գրեթէ խելախորոյս վիճակ մը կ'ապրի, Այնպէս որ նոյն իսկ Լիբանանի հմայիչ լեռներն, անոնց կողքերուն փռուած կանաչութիւնները, որոնք կէտ կիտուած են սպիտակ շէնքերով, չկրցան հմայիլ գրողներու ցանցառութիւն մ'անգամ, հակառակ որ դարեր առաջ հեռուէն կրցած էին ծնունդ տալ Սողոմոնեան բանաստեղծական գրչին ու դարեր վերջ անոնց կողքին նմոն եկած էր երգել բնութեան գեղեցկութիւնը:

Երբ, ձեւի ու գոյնի այս գեղեցկութիւնը չէ կրցած գրաւել երիտասարդ հոգիներ, ալ ինչպէս կարելի է մտածել թէ մոխրացած հայրենիք մը, իր վշտերով ու աւերով, վերածնուած հայրենիք մը իր աշխուժով ու աշխատանքով պիտի կրնային հրապուրել զանոնք այնքան հեռուէն:

Լիբանանահայութիւնն ալ որպէս մէկ հատուածը գաղութահայութեան կ'ապրի անկայուն կեանք մը, անկայուն միջավայրով ու սնտուսութեամբ, ուստի, չէ կրցած կապուիլ որոշ գաղափարի, իտէպլի:

Մէկ խօսքով Լիբանանահայ գրականութիւն գոյութիւն չունի: Սէրըն ու վիշտը ճիշդ է, որ երբեմն թրթռացուցած են այս կամ այն քնարը, սակայն անոնք եղած ու մնացած են առաւելապէս մէկ ընդօրինակութիւնը նախորդներու: Հին կաղապարով նոր գրականութիւն չմշակուիր:

Սակայն բոլոր գողութիւններու մէջ գուցէ ամենէն աւելի գեղեցիկ գրականութիւնը ստեղծելու հոգը ունի Լիբանանահայութիւնը: Հայ միտքն ու երեւակայութիւնը Լիբանանի այս գեղեցկատեսիլ ծովափէն աւելի գեղեցիկ վայր մը չէր կրնար գտնել սնանելու:

### ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Ահա, ես եմ, պայծառ գիտութիւնը գիտութեանց,  
 Որ կը պատահի ժպտոտն խաւարին ֆոզն անբախանց  
 Ու կը պարզեմ կոյր աչիսն առայոյսներ Իրմանու  
 Կեանքի ուղին հարթելով կը դարձնեմ նեւս անփուռ:  
 Կը սահմանեմ ես կեանքի ճիշտը՝ «նշան» չի նշակե՞ս անմեկին  
 Կը բախանցեմ վեհամուտ Տրեգեդի գաղտնիքին,  
 Կազմուցնեմ կրօնի կուռ եռաբուն անգիտակ  
 Ու կը հասցնեմ Մերութեան վէս նախան սպիտակ:  
 Ասքիս ժանրոս խորեւեց հոմ կը ւրեմ հուր կայծերով,  
 Տգիտութեան շղթաներն կը սղոցեմ անխառով,  
 Կը սովորեցնեմ Անհասին խորութեկ խորհիւ առյաւէտ  
 Ու նանչնայ իր հիւրէ ոչնչութիւնն ալ անպէտ:  
 Մտախաբխափ հոգիին Անմահութիւն կուտամ ես,  
 Գեղեցիկն: ճամարիսն ու բարին կը ծորին յար իմ շունչս  
 Յաւիտեանն ծաղիներ կը փրկեմ մրբամամ  
 Մարդիկ իմ ֆոզս կը վնասեն իրենց սկիզբն մոռցուամ:

ԵՓՐԱՏ

ՀՐԱՅԱՅՏ

Խարբերդ

### ԶՓՈՒԱՐԻՆՈՒԱԾ ՍԷՐԸ

Ինչո՞ւ ծնած եմ ես բոլոր այս սէրերով, այս վառ ցանկութիւններով: Ի՞նչպէ՞ս կրնան բարի բնուանոր, երբ կ'առաջնորդեն միմիայն ցաւի եւ յուսախարութեան:

Կ'ուզէի սիրել մէ՛ջը, սիրել զայն մէ՛կ անգամ և յախտեան. կ'ուզէի ինքզինքս անո՛ր միայն նուիրել, անո՛ր համար ապրել, անոր համար մեռնիլ և գոյութիւն ունենալ լիկ անո՛ր համար:

Բայց, ամա՛ս, բոլոր այս ընդարձակ աշխարհին մէջ չի կայ մէկը՝ որ զիս սիրէր այնպէս ինչպէս պիտի ուզէի սիրուիլ անկեց.

մէկը՝ զոր կարենայի սիրել՝ սիրելու ամբողջ վարդապետութեամբս:

Ի՞նչ պարտազ եւ ի՞նչ ամայի կ'եղեւայ ինձ աշխարհը՝ երկինք ինչո՞ւ առած են ինձ այս սէրերը, միայն իյնալու եւ խամբելու համար:

### ԼՈՆԿՖԷԼԸ

Երբ երկինքի վրայ ծիածան մը տեսեմ՝ սիրտս կը բաբախէ: Այսպէս էր ան՝ երբ կեանքս սկստ, այսպէս է այժմ ան՝ երբ երկտասարդ եմ և այս պէ՛տ պիտի ըլլայ երբ ես ծերանամ՝ և կամ երբ մեռնիմ:

### ՈՒՐՄՈ ՈՒԹՐԹՉ

Երուսաղէմ Թրդ. ՇԱՏՐՈՒԱՆ

### Կ Ա Մ Ք

Ամեն գործարանաւոր իր գոյութիւնը տեւականացնելու համար կը կարօտի սնունդի եւ ուրեմն բնութեան մէջ գոյութիւն կ'առնեն գոյգուծեր մէկ մէկու հակառակ: Յարձակողական եւ ուրեմն ներգործական ուժը որ ցոյց կը արուի ուրիշի մը մահուան մէջ իր տեւականացումը փնտռու գործօններու կողմէ, իսկ միւսը փախստական՝ կրուորական շարժումը, որ հալածւող գործարանաւորութեան մէջ ծնունդ կ'առնէ:

Ահա, գիտախօսիւ առիւծը իր անուրի մանչիւնսով սուր սուր ժանիքներով վեհօրէն կանգնած է անտառին դիմաց արիւնձուշտ, յաղթական:

Անդին եղջերուն առիւծին մանչիւնէն անաբեկած, վարկեան մը կը սարսրոյ շացառներուն մէջ պահուրտած ու յանկարծ յիշելով իր թռչող սրբունքները, գլուխը արթննալու թափահարում մ'ընելէ ետք, կը սուրայ լեռն իվեր հովի մը նման, աներկիւղ, եղջուրները հովուն, վերջապէս կը հասնի դունչը դուլալ սուռակին. գոհ է ու հպարտ, ազատ է այլեւս եւ ի զ՛ւր առնադէմ առիւծին մընչիւնը անջրպետին մէջ կը կորսուի անարձագանդ:

Առիւծին դունջը կարմիր արիւն, եղջերու ին պասակած լեզուն սառ ջուր երկուքն ալ յաղթական, երկուքն ալ կ'ապրին:

Ու դարեր անվերջ պատառող ու պատառուող կը քաշեն իրենց գոյութիւնը նոյնքան հաստատուն, նոյնքան երջանիկ, որքան նախապատմական սկզբնական օրերուն:

Մինչ մտակեր ու բուսակեր իրենց իւրայատուկ զէնքերով սպառազինուած հրապարակ են իջեր, անոնց ճիշդ մօտը կայ էակ մը, որ կը ծնանի անզէն, կը մեծնայ անզէն, կը մահանայ անզէն:

Օրօրոցին մէջ ննջող մարդն է ան: Ոչ թե եր ունի ճախրելու ատակ, ոչ սրունքներ՝ փախչելու կարող, ո՛չ ժանիք ու ոչ մագիլ: Տկար է կ'մը, որ մինչեւ գերեզման ոչ մէկ ֆիզիքական զէնքի պիտի տիրանայ:

Բայց բնութիւնը անոր տուած է իմացականութիւնը, ստեղծագործող այդ հրաշալի մեքենայ ուժը: Ահա թէ ինչո՞ւ այնքան անզօր էակ մը կրցած է գոյատեւել իրմէ անհամեմատ դժուոր թշնամիներով շրջապատուած ըլլալով հանդերձ:

Միջավայրը, որուն մէջ դրուած է գործարանաւորութիւնը իր հաղարու մի գրգիռները կը հրամցնէ: Ու գործարանաւորութիւնը պարտի այդ գրգիռները առնել իր մէջ, իւրացնել:

Բոլոր գործարանաւորներուն մէջ մարդն է միակը, որ գիտցած է իրեն հրամցուած այդ գրգիռները առնել իւրացնել եւ զայն ի նպաստ իր գոյութեան պայքարին ծառայեցնել:

Իր բոլոր մտքի կարողութիւնները գործունէութեան կը մղէ զինք: Ու մարդուն գործունէութեան մէկ մասըն է կամենալը:

Մտքը իր իմացական կարողութեամբ կրցած է կազմել փորձառական գիտութիւնը: Մինչդեռ կենդանիները մանկական շրջանէն մինչեւ մահուանին շարժիչ ազդակ մը, բնագոյր, որով կը ճանչնան օգտակարն ու վնասակարը, բարեկամն ու թշնամին: Անոնք ունին զգայարան պատուհաններ, ուրկէ կը մտնեն բնազդական մղումներ արթնցնող առաւիճ գրգիռները, որոնք իրենց անմիջական ազդեցութիւնները ի գործ դնելէ ետք կը մարին, կ'անհետանան:

Այս կոյր բնազդին արդիւնքն է մանկան առաջին ճիշդ անօթութեան մը կամ ցաւի մը համար արձակուած:

Այս օրինակ գործունէութիւն մը կը նմանի հայելիի մը վրայ ինկած պատկերի մը, որ հեռանալու վարկեա-

նին կանհետացնէ անոր վրայ թողուցած իր ազգայնութիւնը:

Մարդը սակայն՝ բնազդական գործունէութեան տպաւորութիւնները կը վերածէ փափափի: Կաւ գրգռի մը տենչը, կամ յոռի գրգռէ մը փախուստը մարդուն միտքին առարկայ կը դառնայ ու ասիկա դեռ յղացումին դազաթնակէտը չէ: Մարդը աւելի մեծ կարողութիւն մը ունի: Ան շրջապատուած է իրմէ դուրս, իրմէ անկախ հազար ու մի երեւոյթներով, որոնք պատահական քմահաճոյքներով երբեմն կրնան իր փափաքներուն սահման մտլ, սակայն կուգայ ժամանակ, բան մը, որ շատ աւելի յաճախող է, երբ արտաքին կոյր աշխարհը՝ անգիտակ մարդուն փափաքներուն՝ անոր հակառակ ուղղութիւն կը բռնէ, կամ երբեմն նոյն իսկ յարձակող կը դառնայ մարդուն կառուցած երեւակայական շէնքին վրայ եւ քար ու քանդ աւերով կը թողու:

Այս պատճառով մարդը կը մղա ի աւելի բարձրագոյն կարողութեան մը յայտնագործումին: Կամեցողութիւնը երեւան կուդայ:

Կամեցողութիւնը գիտակից ու ազատ գործունէութիւնն է մարդուն:

Ազատ բառը չչիթեցնէ մեզ: Մարդը պայմանաւորուած է իր շրջավայրէն: Մարդը կրնայ անոր հրամցուցած պայմաններէն մին առնել եւ թողուլ: Ահա, այս առումով միայն կրսե՞ք գիտակից ու ազատ գործունէութիւն մ'է կամե՞ալը: (շար)

Ս Է Ր

Չոր մացառներ ինձ տային խոց  
Փուռ մը ծակեր սիբսս վոսակոծ,  
Ոչ մեկ թիթեռ կար եր յածիլ,  
Միայնութիւն . . . ժանտասեսիլ:  
Նրբ եռ ձեռքը ես բռնեցի  
Նրկիւն դարձաւ ծաղկանոցի,  
Փուռերն գայիւն ինձմէ մեկդի  
Նւ շուտ տեղի տուին վարդի:

Թարգ. Բ. ՕԹԹՕ ԷՕՐԹԷԼ

ԿԻԼԻԿԻԱ

Արեւ չունիս, ո՛վ իլիկիա պսեսիլի.  
Պատեր է քեզ ազգամուղջը սոսկայի,  
Ջի բարձրաբերձ լեռանցդ վրայ անարկու

Չիկան այլեւս գուարք պարերն հայերու:

Քու աղէքը չեղաւ երբեք, ո՛չ փոքրիկ,  
Ո՛վ պատուական սիրուն անմահ հայերեցի:

Սինուն, ձինուն հերիք լացիք անտրուց  
Չառիք գոցէ, հոգէ ազատ, խաղաղ  
Շունչ:

Անդոհական վերջեւումով միտ իզեք,  
Կուզգեմ յաւեք սեքը սրիս սրտալք ի  
Ջի դո՛ւ միայն ցաւոս հոգւոյս տեղ  
դարձաւ:

Նւ դարմանը՝ խոցոս սրիս վոսահար:  
Ի՞նչ եղաւ քեզ. որ յուած ես յաւիտեան,  
Ո՛վ Կիլիկիա, ո՛վ օրորոց մանկութեան  
Ո՛չ մի բռնուն, ո՛չ մի կռուելի տուր  
գիր:

Բերաւ ինձի գարունի կեանք բե՛կրայիր:  
Օրօրեցիք անմեղ հոգիս երազիտ  
Քնացուցիք սրիս յոյզերն արեւոտ,  
Ո՛վ հայկական հին մո՞ծ երկիր Կիլիկիա  
Մոռցա՛ր արդիք այնքա՛ն շուտով անխնայ:

Օր մը կրկին երկինքներէդ մքամած  
Պիտի ծագի արձալոյս մը վեհապանծ  
Ու այն ատեն, դո՛ւ Կիլիկիա պատուական

Պիտի լինիս ինձի համար գերեզման  
15 Դեկտ. 929

Մուսուլ ՍԻՐ. ՕՐՁԱՆԵՆՆ

ՎՐԻՊԱԿ

Ներկայ թիւին Բ. էջին տպագրութեան  
ատեն կատարուած են կարգ մը սխալներ, որոնց  
կարեւորներն են.

Վերէն 15, տող 4-օւսացուցին — գօսացուցին  
Վարէն 14՝ յ նման — իրենան  
Խմբագրութիւնը ներողութիւն կը խնդրէ  
ընթերցողներէն, ապագային նման սխալներէ  
զգուշանալու պայմանով:

Շար Ա. Թիւ էն

Մ- Գ: ԻՆ

Մաքուր դարձուցիր էջը, բայց ետ  
բծաւորեցի, քանզի մարդիկ ամենա՞  
գէտ չեն եւ ներմակ էջը պարագ էջ  
կրնար նկատուիլ, մինչ լուրջիւնք  
միշտ ալ պարագ չէ և ուստի իմ թո-  
ղուցած այս կէտերը լուրջիւն կ'ի-  
մացնեն:

.....

Ալ անունդ չեմ դներ, քանզի ի՞նչ  
իրաւունքով գործածեմ անուն մը,  
որ անպատասխան կը թողու եղած  
ատաջարկ մը, գրուած երկատոյ մը,  
թէ կուզ խիստ անվարժ գրչէ ելած:

Այս առթիւ յանկարծ կը յիշեմ հո-  
ղեկան վիճակը անոր, որ կը խնդրէ  
ձեռք մը ու պատասխան չստանար:  
Սարսափելի է:

Լուս մնացիր, ենչո՞ւ, Ձեմ դիտեր:  
Պատճառները կրնան այլազան՝ ըլ-  
լալ:

Մուլութիւն արդեօք: Բայց ի՞նչ-  
պէս կարելի է մէկը ծոյլ նկատել, երբ  
ան դեռ երիտասարդ է, այսինքն  
կեանք ու կոխ համակ: Պատերազմի  
դաշտին վրայ հանգչող, նիրհող գին-  
ւորն անգամ կարելի չէ ծոյլ նկատել  
քանի որ անոր ներսը կը դարբնուի  
ուժը դիմադրող ու յողթ-հարող,  
ալ ու՞ր կը մնայ սոքի վրայ, հրացա-  
նը ձեռքին, պատնէջին ետև, թու՞-  
բին վրայ, ձիուն կոնակին, ու նման  
դիրքերու մէջ գտնուող գինւորը:

Ու գուցէ, որ գինւոյ լն ես կըթա-  
կան մարզին, ո՞չ, չես կրնար, չէի՞ր  
կրնար ծոյլ ըլլալ:

Չկամութիւն: Բայց ո՞վ կը պար-  
տադրէր քեզ անկամայ յանձն առնել  
այսօրինակ գործ մը: Խոստումը սուրբ  
է, գայն պահելը պարտականութիւն-  
ներու գեղեցկագոյնն ու ազնուագոյ-  
նը: Կը հաւատամ ուստի, թէ շկա-  
մութիւն ալ չկայ:

Ու այսպէս, եթէ թու մն մասան-  
ցը ընեմ, բոլոր ներքին պատճառնե-  
րուն, վստահ եմ թէ ամեն քն ալ պիտի  
արդարանան և ուստի քու մէջդ պատ-  
ճառ մը չեմ դիտեր լուս մնալու: Հայ  
օրիորդի՛ մը հոգին վերլուծել դժուար  
է, բայց գոնէ անհեղձութիւն մը կայ  
որը կը թուրատրէ մեզ բոսի: Թէ կը-  
նանք անոր հոգին վերլուծել և քրն-  
նադատութեան բովէն անցնել, որով  
կը ներխու անշուշտ, երբ կըսեմ բոլոր  
ներքին պատճառներդ կ'արդարա-  
նան:

Փակագիծ մը բանամ: Ի՞նչ բռել է՞  
արդարանալ, Արդարանալ կը նշանա-  
կէ դիմացիներ լանցաւոր չհանելու օր-  
րամադրութիւն ունենալ: Հաւատա,  
բոլոր դատաւորներն ալ տառեկա-  
պէս իրենց տրամադրութիւններէն  
վարուած կուտան վճիռը: Ըսել է  
այս վարկեանիս հոգիս քեզ հանդէպ  
լաւ տրամադրուած է, այլապէս ծան-  
րօրէն պիտի դատապարտէի քեզ:

Ուստի դուքսը փնտտեմ լուրջիւն-  
նրդ պատճառը: Մնո՞ղդ չի թողուր  
արդեօք: Եթէ ձիւտ եմ, դժուար է  
այս մաթին խօսիլ:

Մնողքը յաճախ կեանք կուտան  
մարդուն, բայց կը կապտեն անոր  
մէկ ուրիշ կեանքը: Երաւունք ու-  
նին: Այո՞ եւ ոչ:

Այո՞, քանի որ իրենցն ենք: Ան-  
հուն ցաւերով կը ձնին մեզ, երկուն-  
քի ծանր վարկեանները կ'ապրին:  
Քիչեր ու չեքեկ մեզ համար կը շնչեն  
և ուստի պէտք է հսկեն մեր վրայ,  
ուզաի իրաւունք բռնին պահանջելու  
ըլլալ այն, ինչ որ կը կամին:

Բայց ո՞չ ո՞վ բսաւ, որ մեզ բերեն  
այս ցաւերու աշխարհը: Եթէ իրենց  
հաճութիւն համար մեզ դատապարտած  
են անդէականի տանջանքներուն,  
ինչո՞ւ ուրեմն չպիտի թողուն ըլլալ  
ա՛յն, ինչ որ մենք կը կամինք: Եւ  
ո՞վ դրաւ մեր մէջ չարտայայտուելու,  
ըլլալու, ըղձալու, կամենալու, դա-



տելու. ա. ժը եւ ան ալ այս ձեւը, որ  
այժմ ունինք: Ա՛յ գրաւ մեզ այն  
չաւդին մէջ ուրկէ կը քայինք և ո-  
րուն առջիւ պատնէշ կանգնեցնել կը  
ջանան:

Մենք մեզի հետ յոնջ ինչինքս  
ինչ որ իրենք տունն: Ասկի՞ց ա-  
սինք ուրիշ բաներ: Այն ընկրութե-  
նէն, որուն յանձնեցին, այն պայ-  
մաններէն որոնք շրջապատեցին մեզ,  
մէկ խօսքով ոչ մէկ բան ստեղծե-

ցինք: Ամէն բան կամ իրենք տունն,  
կասանոնք որոնց յանձնեցին: Աւտի  
մենք յանցաւ որ չենք, եթէ իրենց  
անհաշիւ դործերէն մեր մէջ ստեղծ-  
ուած է բոլորովին տարբեր մտածում  
քան ինչ որ իրենք կը կամենա-  
ցին:

— Աւտի անարգար են սնունք:  
Ահա իմ խօսքը:

X

### ՉՈՆՈՒԱԾ ԵՂԱՆԱԿԸ

[Շար. Ա. քիւրճ]

Այսպէս էր Արտաշէս: Իւրաքան-  
չիւր այցելութեանս մէկ եղանակ կը  
նուագէր: Միեւնոյն տխուր եղանակը:

Երբեմն կ'ըսէի, «Արտաշէս, ին-  
չո՞ւ ուրիշ եղանակ չես նուագէր»:

— Ասիկա շատ կը սիրեմ, անոր  
մէջ հողի օր սուսուս ինչը և այ-  
նուրիշ եղանակներ կը ձանձրացնեն  
գիս, կը զղուեցնեն երաժշտութենէն,  
կը պատասխանէր:

Օր մ'ալ պատմեց. «Երիտասարդ  
մը սեռնելէ վերջ, իր սիրուհին անսր  
չիրմին վրայ ծնրաղլր կ'աղօթէ Աս-  
տուծոյ, որ զինք ալ տանի անոր ե-  
տեէն: Արտասուսթոր կը յայտնէ  
Աստուծոյ, թէ ես անսր մահէն ետք  
չեմ կրնար կենակցել ուրիշի հետ  
Անկէ ետք աւելի հետաքրքրուեցաւ  
և քաւելի ուշաղլր սալկ ըրի»:

Օր մը առանձնացած՝ Արտաշէս ե-  
տա իւր խուլ անակի մը մէջ կը խօ-  
սակցէինք: Սենեակը աղօտ լոյսի մը  
չերքեւ մշուշապատ մթնոլորտի մը ե-  
րեւոյթն ունէր: Բարեկամս բոլոր-  
ովին փոխուած էր: Է՛հ, ո՞վ գիտէ եր-  
կու ճնշիչ տարիներ որքան կնճիւններ  
չգամ էին մեր ճակտին: Անոր ճակ-  
տին կնճիւններու խուրձ մը խոր խոր  
սկօսներու նման կ'երկարէին, կը մա-  
րէին քունքերուն մօտիկէ:

Չկային կարողութիւններ ու վառփուռն այ-  
տերր, չկային սիրուն ձայներ, սեւ ու  
երկար մազերը: Գեղնած ու ոսկրոտ  
դէմքը կմախքի մը յուրտ տպաւորու-  
թիւնը կը թողուր դժողին վրայ:  
Շատ փոխուած էր:

Սակայն կը խօսէր եռանդուն, աչ-  
քերը, որոնք բերք մարիլ չգլտցան,  
արտեւանունքին խորը կը շողային  
անվերջ: Անոնց փայլունութեան տակ  
դառն վիշտ մը տրտնուած կ'երեւէր որ  
նայուածքն հետ կը փոխադրու-  
ուէր ինձ: Ենդո՞վ կնճիւնի վեթ փու-  
թութի մը նման ցաւի մեծ արտայայ-  
տիչ մէք: Եւ ասէր տիեզերքը, կ'ա-  
տէր մարդկութիւնը որովհետեւ տիե-  
զերքը ճնունդ տուած էր կատարե-  
լագործուած դաշանին, մարդուն, որ  
այնքան ցաւեր, կոտորացող վէրքեր  
բացած էր իր անգոր, երաժշտի զգա-  
յուն սրտին եւ որոնց ճնշումին տակ  
հալած, մաշած էր: Կեանքը զղուելի  
էր:

Բաւական երկար, այլ վշտոտ խօ-  
սակցութենէ որ ետք, Արտաշէս ոտ-  
քի ելաւ, երկու քայլ յոռաջացաւ  
դէպի մութ անկիւն մը և սեւ ու  
փոքր արկղ մը առնելով ետ եկաւ:  
Ջութակն էր:

Կեցաւ դիմացս ու սկսաւ նուագել:  
Աշխոյժ չկար: Պարզ իբր ձեւակերպու-  
թիւն կը կատարէր: Լրացաւ ու նըս-  
տեցաւ:

Սղանակը հինէն կը տարբերէր:  
Հին եղանակը պահանջեցի Հին

յուշերուն մէջ ապրիլ կը փափաքէի:

Պահանջքս անկատար մնաց: Արտաշէս լու՛ն, գլուխը խոնարհած, ակնարկը գետին դամած կը կենար: Զգացի որ դառն յիշատակներ թարմացուցին սրտին ցաւերը:

Գլուխը վեր առաւ: Ակնարկ մը նետեց վրաս. կրկին խոնարհեցաւ: Աչքերուն մէջ բիւրեղացած արցունքներ կը փայլէին, որոնց յորդումը մազէ կախուած էր: Զ կրցայ համբերել, նետուեցայ անոր ուսին ու լսուսէ Արտաշէս՝ պոռագի:

Արտաշէս գլուխը բարձրացուց: Աչքերը որոնք երախայի մը պէս շիթ շիթ արտասուք կը հոսեցնէին և ըսաւ. Այն եղանակը, որ կը պահանջես, նուիրած եմ սրտի մը: Եւ իր դիակին առջև երդում ըրած եմ ալ շնրւագեղ:

Կը սիրէի զայն. սիրած եղանակս անոր նուիրեցի: Ալ չեմ կրնար նըւագեղ: Անով իր աչքերը յաւիտենապէս գոցեցի...: Հիւանդ էր... մահամերձ հիւանդ...: Անկողնին մէջ

կմախացած հագիւ կը շնչէր. դժուար էր դէմքը սաւանէն զատել: Սեւ աչքերը փոսացած այլ կը կայծկլտային...: Կ, այդ կ'ընթերթ. կ'ըլամ, որ տակաւին սիրտս կ'այրեն: Այդ շողարձակ, սիրուն աչքերը կըսէին ինձ. «Արտաշէս, օգնէ ինձ, հոգիս կը խըլուի մաս առ մաս... բարի հոգիներ են անոնք... մի՛ դպչիր անոնց, որո՞վհետեւ անմեղ եմ և մաքուր: Ոհ, Արտաշէս՛, երգէ, նուագէ, որպէսզի այդ հոգիները հրճուին, պար բռնեն ու հոգիս խաղցնեն»: Ու ես կը նըւագէի միշտ կը նուագէի, որմէ դո՛ւ մահուան ծոցէն կը ժպտէր ինձ...:

«Երթալով մարմինը կը հիւժէր, անկողնին կը փակչէր ու կը դժգոհէր... մազերը խոխ, խոխ ցիր ու ցան բարձն ու վերմակը կը զարդարէին...: Բժիշկը ես էի, դարմանը եղանակը: Կը հրճուէր ու կը ցնծար. գիտէր, կը յիշէր այն օրը, այն գերեզմանիկ օրը, երբ իրեն առաջին անգամ նուագեցի այդ եղանակը, որուն փոխարէն իր սիրտը ինձ տըւաւ...»

[Շար.]

S. ԳԱԼԱՅԻԱՆ

**ՄԱՆԿԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Խմբագրութիւնս սիրով էջ շը պիտի յատկացնէ մանկական գրականութեան: Առ այժմ «Սինուն»ին ծաւալը չթուլատրէր, որ հէքիաթներ և նման երկար պատմութիւններ դրուին այլ նախընտրութիւնը պիտի տրուի կարճ ոտանաւորներու:

**ԱԶՔԻՆ ԳՈՎԷԸ**

Աւա՛ղ, խօսի մեզ չեմ վարպետ  
Թեւ կոչուիմ ես կարապետ,  
Բայց սա սեւ սեւ աչքերուս ծոց  
Կրնամ բաղել ձեր վիշտ ու խոց:


**ՈՐՈՒ ՊԱՐՏԻՄ**

Աչքերս՝ փայլակ,  
Դեմքս կրակ  
Ես դուրս կուտամ:  
Եւ քաղցրահամ  
Խօսքեր յանախ  
Հասիմ անվախ  
Իմ սա բերեցն:  
Ու այս ամենն  
Որո՛ւ պարտիմ...  
Քեզի՛... մայր իմ:

Ասոնց փոխան սամ քեզ համբոյր  
Ուսկի՞ց կ'ուզես, աչքէ՛ս, դեմքէ՛ս,  
Որ վարդերեցն առաւ իր բոյր:  
Ոչ՛, երկուքեցն ալ սամ ես քեզ:

Տեք եր Տեօրեց Կ. Տօնիկեան

Պէրուք «Լիբանան»



Handwritten number 1373 and a signature.

# Վ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն Ա Ջ Գ

Թերթերէն կը խնդրուի փոխանակել:

Հրատարակութիւններ — գիրք, պոստիւր — եթէ զրկուին խմբագրու-  
նը սիրով տեղ պիտի տայ ծանուցման:

Յօդուածները պէտք է գրուին մէկ էջի վրայ:

Չհրատարակուած ձեռագիրները ետ ստանալու համար փութի ծախս  
զրկուելու է:

Վարչութիւնը որոշած է իր յարգելի բաժանորդներուն և հայ հասա-  
րակութեան հրամցել նորընտիր պատմուածքներ առանձինն պոստիւրով:

Ռէփրամի վերաբերեալ ոեւէ ծանուցում չաւաղոյն պայմաններով կը  
տանձնէ «Սինուն»:

## ԲՄԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սիւրիոյ եւ Յրանսայի համար տարեկան 30 Ֆրանկ:

Ուրիշ երկիրներ տարեկան 2 տղար կամ 50 Ֆրանկ:

Պէյրուքի մէջ ձեռքէ կը ծախուի 5 Ա. Դ.

## Ո Ւ Շ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Դրամական առարուժները կատարել

( միմիայն B. P. 718 )

Պ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ Ի անունով

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0683192

[ 204. ]

ЦЕНА

1702  
1373

# Տ Պ Ա Ր Ա Ն

## Կ. ՏՕՆԻԿԵԱՆ

Ձեր տպագրական ամէն տեսակ գործերուն համար գիմեցէք մեր տպարանը՝ Հայերէն, Թրանսերէն. Արաբերէն գիրերու ճոխ մթերք:

Դիմել Կ. Տօնիկեան  
Փօստարկղ Թիւ 718  
Պէյրուս

## Կ Ը Փ Ն Տ Ռ Ո Ւ Ի

Կը փնտռուի բնիկ Ատանացի արհեստով ատաղձագործ Պ. Գարեգին Պէրպէրեանը [հօրը անունը Մելքոն, մօրը անունը Սւա:] Յիշեալը Կ. Պօլիս քոյր մը ունի Տիկ. Նազանաէր [ամուսինը Նշան] Պարոնեան: Յիշեալը 5 տարի առաջ Կ. Պոլսէն մեկնած է Մ. Նահանգները: Հասցէն գիտցողներէն կը խնդրուի խմբագրութեանս հասցէով իմացնել մօրեղբօր Պ. Արամ Գալաճեանի և քրոջ տիկ. Նփրաքսէի: Կը խնդրուի Երիտ. Հայաստանի խմբագրութենէն արտատպել: